# Շրջակա միջավայրի վրա ազդեցության
# Նախնական գնահատման հայտ

## ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ս. Զուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի

Կազմակերպություն՝ «ԱՐՄՎԱՀՇԻՆ»ՍՊԸ

Տնօրեն՝ Ռ. Ավետիսյան ____________

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.................................................................3
Ձեռնարկողի մասին տեղեկություն.............................................................3
Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը .........................................4
Նախատեսվող գործունեության բնութագիրը ......................................................................7
Նախատեսվող գործունեության նկարագիր..............................................................7
էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ......11
ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ......12
Գլխավոր հատակագիծ.............................. . .......................... .............................20
Նախատեսվող աշխատանքների կազմակերպում և ժամանակացույց.....................................27
Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ Կադրային ապահովում և շինտեխնիկա..............................................................31
Նյութերի և բնառեսուրսների օգտագործում..................................................40
ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ........................42
ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ...............................................................42
ԿԼԻՄԱՆ.............................................................................................................................44
Օդային ավազան..............................................................................................................47
Ջրային ռեսուրսներ .........................................................................................................48
Հողերի նկարագիրը .........................................................................................................49
Հիմնային աշխատանքներ...............................................................................................49
Կենսաբազմազանություն.................................................................................................50
Թափոնների կառավարում ..............................................................................................52
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ......................................................54
ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.......................................................................................................54
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ..................................................................................55
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ......55
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ..........................................................................................................55
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ......................................................................................................56
ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ........................................................................56
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ...................................57
ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ..............................................59
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ..........................................................60
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.............61
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ...............................................................64
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.......................................................................66
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ...............................................................................................................67

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝ << ԱՐՄՎԱՀՇԻՆ >> ՍՊԸ

Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Ք. ՆՈՐ ՀԱՃԸՆ ՉԱՐԵՆՑԻ 19 20

Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Ք. ՆՈՐ ՀԱՃԸՆ Ս. ԶՈՒԼՖՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 14

Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք

## Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Նոր հաճըն խոշորացված համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ս. Զուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

2023թ.-ի հունիսի 6-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

## Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),

3. < Թափոնների մասի > ՀՀ օրենք (24.11.2004 թ.),

4. < Վարչական իրավախախտումների մասին > ՀՀ օրենք (07.02.2012թ.),

5. < Մթնոլորտային օդի պահպանության մասին > ՀՀ օրենք (01.11.1994թ.),

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (06.06.2023թ),

7. < Բնապահպանական վերահսկողության մասին > ՀՀ օրենք (11.04.2005թ),

8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009- 06 հաստատելու մասին”

12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀO-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀO-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀO-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Նախատեսվող գործունեության նկարագիր

Հողատարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նոր Հաճըն քաղաքում Ս. ԶՈՒԼՖՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 14 հասցեում, նախկին արտադրական տարածքում: Ընդհանուր հողի մակերեսը կազմում է 6200.5 քմ: Հողամասի տարածքում գոյություն ունի աննշան ռելիեֆի անկում (1337.5մ նիշից մինչ 1341.5 մ նիշ): Նախագծում որպես պայմանական 0.00 նիշ է ընդունված 1340.0 նիշը:

Տարածքում գոյություն ունեն կառույցներ՝ պահակատուն-79.8քմ, ծածկ-139.6քմ, պարիսպ-6.7քմ:

Էսքիզային նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող կառույցները ապամոնտաժել, և տեղում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր: Համալիրը բաղկացած է հյուսիս-հարավ ուղղությամբ տեղադրված երեք բնակելի մասնաշենքերից և օժանդակ մասնաշենքից: Եզրային մասնաշենքերը նախատեսվում են յոթ վերգետնյա հարկով, իսկ կենտրոնական մասնաշենքը՝ ութ վերգետնյա հարկով: Բոլոր մասնաշենքերում նախատեսվում է ստորգետնյա հարկեր, ընդհանուր առմամբ 78 ավտոկայանատեղերով: Նկուղային հարկերում նախատեսվում են նաև տեխնիկական տարածքներ ինժեներական ենթակառուցվածքների, և տարածքը որպես ապաստարան շահագործման դեպքում անհրաժեշտ օժանդակ սենքերի համար:

Վերգետնյա հարկերը նախատեսվում են բնակելի՝ տիպային հատակագծային լուծումներով:

Տանիքը նախատեսվում է հարթ՝ ներքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Օժանդակ մասնաշենքում նախատեսվում է լողավազան, հանդերձարաններ, ցնցուղարաններ և լողավազանի սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական տարածքներ: Տանիքը նախատեսվում է երկթեք՝ արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Շենքերի տեղադրումը, ինչպես նաև հատակագծային լուծումները մշակվել են՝ հաշվի առնելով հրդեհային անվտանգության և արևահարման նորմատիվային պահանջները:

Բակային տարածքում նախատեսվում է բարեկարգում, կանաչապատում, պարիսպների իրականացում: Հողատարածքի սահմաններում նախատեսված է նկուղային հարկերի մուտքի կազմակերպումը, հրշեջ մեքենայի մոտեցման և շրջանցման ճանապարհի համար մասնակի նախատեսվում է զեռցանց: Հարևան հողատարածքներից և գոյություն ունեցող կառույցներից հեռավորությունները նախատեսված են նորմատիվային պահանջներին համապատասխան:

Ապահովված է հրշեջ մեքենաների մուտքը տարածք:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ստորգետնյա ավտոկայանատեղին ունի երկակի նշանակություն, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված է իրականացնել սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքը ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Աստիճանավանդակներում նախատեսված է տեղադրել հրակայուն դռներ:

Հեղեղատար համակարգի խողովակները նախատեսվում է անցկացնել ընդհանուր օգտագործման միջանցքներով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարարական տարածքներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- Հողատարածքի մակերեսը - 6200.5քմ

- ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐ

- -6.600 նիշում հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով՝ ներառյալ թեքուղին - 1822.7քմ

- -3.300 նիշում հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով - 1814.6քմ

- -3.300 նիշի տրանսպորտային մուտքի թեքուղի կից հենապատերով - 62.5քմ

ԵԶՐԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ թիվ 1

- 1-ԻՆ ՀԱՐԿ - 562քմ
- բնակելի հարկերի մակերես - 657քմ (2-7 հարկեր)
- Տեխնիկական հարկի մակերես - 54.8

Ընդհանուր մակերեսը արտաքին պատի արտաքին եզագծով - 4558.8քմ

Բնակարանների քանակ - 33բն

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ թիվ 2

- 1-ին հարկ - 537քմ
- բնակելի հարկերի մակերես- 560քմ (2-8 հարկեր)
- Տեխնիկական հարկի մակերես - 54.8

Ընդհանուր մակերեսը արտաքին պատի արտաքին եզագծով - 4511.8քմ

Բնակարանների քանակ - 29բն

ԵԶՐԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ թիվ 3

- 1-ԻՆ ՀԱՐԿ - 562քմ
- բնակելի հարկերի մակերես - 657քմ (2-7 հարկեր)
- Տեխնիկական հարկի մակերես - 54.8

Ընդհանուր մակերեսը արտաքին պատի արտաքին եզագծով - 4558.8քմ

Բնակարանների քանակ - 33բն

ՆԿՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԿԻՍԱՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ

- -6.60 նիշում - 1648քմ
- -3.30 նիշում - 1648քմ

- 8-րդ հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով (ներառյալ տերասսաներ)- 560.2քմ

- Տեխնիկական հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով՝ 54.8քմ - Ընդհանուր մակերես - 17290.2 քմ

- ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱՇԵՆՔ

- Նկուղային հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով՝ ներառյալ արտաքին աստիճանները - 417.0քմ

- Վերգետնյա հարկի մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով՝ ներառյալ երկրորդ լույս - 402.0քմ

- Պարիսպի մակերեսը - 63.8քմ

- Կառուցապատման մակերեսը (բնակելի շենքեր, պարիսպներ, թեքուղիներ, օժանդակ մասնաշենք)՝ 1719.4քմ + 63.8քմ + 62.5քմ + 417քմ= 2262.7քմ (36.5%)

- Կանաչ գոտի՝ 2562.3քմ (41.3%)

- Անջրանցիկ մակերեսներ (մայթեր, սալահատակ, ճանապարհ)՝ 1375.5 (22.2%) - Կառուցապատման ընդհանուր մակերեսը (ներառյալ բնակելի շենքեր, նկուղային հարկ, թեքուղիներ, պարիսպներ) - 18173.0քմ

- Բնակարանների քանակ - 33 + 29 + 33 = 95 բնակարան

- Ավտոկայանատեղերի քանակ - 78 կայանատեղ (82.1%)

- Ընդհանուր բնակելի մակերես - 3430.4 + 3480.1 + 3430.4 = 10340.9 քմ

- Հողամասի նպատակային նշանակությունը- բնակավայրեր,

- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը- բնակելի կառուցապատման,

- գրանցված իրավունքի տեսակը- սեփականություն,

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտնկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բնակելի շենքի խոհանոցներից, ս/հանգույցներից և լոգասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակակենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է գազօջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

# «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

*ԱՆՎԱՆՈՒՄԸ՝* ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔ

*Լիցենզիա N 18425*

Տնօրեն՝ Հ. Տիտիզյան

Երևան 2024թ.

Բացատրական մաս

Համաձայն«ԱՐՄՎԱՀՇԻՆ»ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ս. Ջուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեի հողամասի տարածքի համար:Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ս. Ջուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեի հողամասի տարածքի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ:

2. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

3. Տեղադիտական հետազննություններով վեր հանելու համար վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները /սողանք, քարաթափում, ճահճացում և այլ/:

4. Հորատանցքներով աշխատանքներ՝ նշված հրապարակներում լիթոլոգիական կտրվածքները, գրունտերի շերտերը ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը, որոշելու նպատակով:

5. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

6. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի համար:

7. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Քանի որ տեղանքը իրենից ներկայացնում է ըստ ՀՀՇՆ-1-2,01-99- իինժեներաերկրաբանական պայմանների II-րդ միջին բարդության կարգի տեղամաս, ուստի հորատանցքները ընտրվել են առավել նպաստավոր տեղերում, որպեսզի առավելագույն հնարավոր լինի բացահայտել գեոմորֆոլոգիական սահմանները:

УГБ-50М հաստոցով մեխանիկական չոր եղանակով փորվել է 5 հորատանցք՝ 4-ը 13գծ/մ խորությամբ, 1-ը՝ 9գծ/մ խորությամբ: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքներ, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Հորատանցքների, արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տալիս շերտերի

կարագրությունը տալ մինչև 13,0մ խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<u>Գեոմորֆոլոգիական տեսակետից</u> տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը:

<u>Ուսումնասիրվող տարածքը</u> Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են նեոգեն ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքեր, մի շարք միջին չորրորդական լավային հոսքերով:Այս ապարներԻ արտաքին շերտը հիմնականում ծածկված են էլյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ ծագման նստվածքներով:

<u>Կլիման </u>ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը:Շրջանը գտնվում է «Ցուրտ կլիմայական շրջանում: Շրջանն ունի ցուրտ ձմեռով և զով ամառով կլիմա: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝ըստ «Հրազդան» օթերևութաբանական կայանի տվյալների

- Տարեկան միջին ջերմաստիճանը 5.4 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 32°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -25°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 69%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 46%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 500-700մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.8մ/վ :
- Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 132 սմ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 90սմ






Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

__Հիդրոերկրաբանական տեսակետից__ տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքում՝ շրջանում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին, սակայն գտնվում խորը հորիզոններում: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին, որոնք բեռնաթափվում են Հրազդան գետը: Գրունտային ջրերի հորիզոններ ըստ փորված հորատանցքների չեն բացահայտվել :

__Ֆիզիկաերկրաբանական__ վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

__Շրջանի սեյսմիկ պայմանները__ Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:



## Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների :Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների չորս շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

**Շերտ-1 Հողաբուսական շերտ ավազակավի լցոնով:** Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-82-ի I (9ա) կարգ է:

**Շերտ-2 Ավազակավեր բացից մինչև գորշ շագանակագույն,** դարչնագույն խճի և մանրախճի պարունակությամբ: Էլյուվիալ-Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-82-ի III (33գ) կարգ է:

**Շերտ-3 կավ** դեղնավուն, գորշ դեղնավուն, խճի, մանրախճի պարունակությամբ, թեթև փոշենման մասնիկների պարունակությամբ, տեղ-տեղ փուխր: Ժամանակակից էլուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-5-82-ի III (8գ) կարգ է:

**Շերտ 4** Ալյուվիալ-պրոլյուվիալ ծագման նստվածքներ ավազակավի15-20% լցոնով, 5-10% գլաքարով : Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության:: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-5-82-ի (6գ) IV կարգ:

**Շերտ 5** Բազալտներ ծակոտկեն, միջահատիկ, մոխրագույն, ամուր, երբեմն խարամային բազալտի ենթաշերտով: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՄՆԻՊ IV- 5-82-ի (19) VII կարգ է:

*ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Ս. Ջուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեի հողամասի տարածքի ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն*

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 5 տարբեր շերտերով,:
- Տեղամասում մինչև 13մ խորությամբ փորված հորատանցքներով Գրունտային ջրերի հորիզոններ չեն բացահայտվել:
- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, որպես հիմնատակ խորհուրդ է տրվում.

✓ Շերտ 3 /կավեր./, որոնց սեյսմիկ հատկությունը ըստ (ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է:

- o Դիմադրությունը R= 2.0 կգ/սմ$^2$
- o Ընկրկելիության գործակիցը $K_0$ 2500 տ/մ$^3$

✓ Շերտ 4 /Ալյուվիալ ծագման նստվածքներ./, որոնց սեյսմիկ հատկությունը ըստ (ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է:

- o Դիմադրությունը R= 3.5 կգ/սմ$^2$
- o Ընկրկելիության գործակիցը $K_0$ 4000 տ/մ$^3$

✓ Շերտ 5 / ն Բազալտներ./, որոնց սեյսմիկ հատկությունը ըստ (ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է:

- o Դիմադրությունը R= 6.0 կգ/սմ$^2$
- o Ընկրկելիության գործակիցը $K_0$ 25000 տ/մ$^3$
- o

- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ զոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,4g և ունի 9 բալ սեյսմիկայնություն:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.23 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 90սմ:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
- Առաջարկվում է ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից իրականացնել հիմնափոսի զննում և տալ եզրակացություն:

Երկրաբան՝ Հ. Տիտիզյան

# Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ   Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ց Ա Ն Կ


1.ՀՀՇՆ 22.01.23«Շինարարական կլիմայաբանություն

ՀՀՇՆ 1-2.01-99 Ինժեներական հետազննություններ շինարարության համար

2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության Կարգը

3. ՀՀՇՆ 20.04.2020  Երկրաշարժադիմացկուն շինարարություն

4. ՄՆիՊ IV-5-82 Հավաքածու 1. Հողային աշխատանքներ.

5. ԳՕUՏ 32868-2014 Ինժեներական և երկրաբանական հետազոտությունների պահանջներ

6. ԳՕUՏ 33063-2014 Տեղանքի և բնահողի տեսակների դասակարգում

7. ԳՕUՏ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.

8. ԳՕUՏ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 18425

( լիցենզիայի համարը )

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

( գործունեության տեսակը )

Տրված է «09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թ.» «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ, ԵՐԵՎԱՆ, ԲՐՅՈՒՍՈՎ 62 Շ., ԲՆ. 31

( լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը )

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն) Կ.Տ.

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ
(անուն,ազգանուն)


50860
53679
25467
30038
36248
36175
61485
81567
79536
101575
79194
96386
127550
99328
0001
0518
0519
0520




ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ -3.300 ՆԻՇՈՎ Մ 1:500




ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.000 ՆԻՇՈՎ Մ 1:500




ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՏԻՊԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ Մ 1:500

Կոտայքի մարզ

Նոր Հաճն համայնք

Հատված կադաստրային քարտեզից

Կադաստրային ծածկագիր՝ 07-006-0013-0235

Մասշտաբ 1: 2000

կադաստրի կոմիտե




սպասարկման գրասենյակ Կ.Տ

Կոտայքի մարզ
Նոր Հաճն համայնք
Կադաստրային ծածկագիր` 07-006-0013-0235
Կոորդինատներ

| | Կոորդինատներ | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8464231.3116 | 4463510.2252 |
| 2 | 8464228.5971 | 4463464.8805 |
| 3 | 8464267.2719 | 4463462.1080 |
| 4 | 8464274.7011 | 4463461.5754 |
| 5 | 8464297.9615 | 4463459.9079 |
| 6 | 8464297.9729 | 4463483.6333 |
| 7 | 8464298.0030 | 4463505.5201 |
| 8 | 8464298.0460 | 4463537.7316 |
| 9 | 8464298.0478 | 4463543.9826 |
| 10 | 8464298.0301 | 4463547.7338 |
| 11 | 8464298.0389 | 4463554.7319 |
| 12 | 8464284.6412 | 4463554.9882 |
| 13 | 8464265.5649 | 4463555.3532 |
| 14 | 8464257.8294 | 4463555.4072 |
| 15 | 8464234.0262 | 4463555.5698 |

սպասարկման գրասենյակ Կ.Տ

Կոտայքի մարզ
Նոր Հաճն համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-006-0013-0235
Մասշտաբ 1: 500

կադաստրի կոմիտե




սպասարկման գրասենյակ Կ.Տ

## Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաքորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

## Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

## Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Հաճն քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա` հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

*Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց*

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 720,0 օր շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

## ՇԻՆ. ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ






*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ*

1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԳՈՏԵՎՈՐՈՂ ՊԱՏՆԵՇԻՆ` ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՑՈՂ ՎԱՅՐՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՓԱԿՑՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.03.2012թ. N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ

*ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ*

| | |
|---|---|
| | Կառուցվող շինություններ |
| | Ժամանակավոր տեղադրվող մետաղե վահանակային պատ |
| | Անվտանգ հետիոտն ճանապարհ |
| | Շին հրապարակ մուտք եվ ելք |
| | Ավտոմեքենաների շրջադարձի տեղամաս |
| | Ժամանակավոր ավտոմոբիլ. ճանապարհ |
| | Աշխատանքային վտանգավոր գոտու սահմանագիծ |
| | Ավտոտրանսպորտի լվացման կետ |
| | Հակահրդեհային վահանակ |
| | Լուսարձակներ |
| | Ժամանակավոր տաղավարներ |

*ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ*

| № п/п | Անվանում | Չափ. Միավ. | Քան. | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակ | Հատ | 2 | |
| 2 | Հանդերձարան | Հատ | 4 | |
| 3 | Ճաշարան | Հատ | 2 | Պատրաստի սննդի |
| 4 | Լոգարան | Հատ | 2 | |
| 5 | Հագուստի չորանոց | Հատ | 2 | |
| 6 | ԲԻՈ զուգարան | Հատ | 2 | |
| 7 | Աղբի տարաններ | Հատ | 2 | |
| 8 | Լուսարձակներ | Հատ | 16 | |
| 9 | Հակահրդեհ. վահանակ | Հատ | 4 | |
| 10 | Թափոնների պահոց | Հատ | 3 | |
| 11 | Նյութերի պահեստ | Հատ | 6 | |
| 12 | Բացօթյա պահեստ | Հատ | 3 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳՃ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | | |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐՇ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | | | | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | | | |

| | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ | ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | |
| ՄԱՍՇՏԱԲ | 2022 | |
| ՓՈՒԼ | ԱՆ | |
| ԹԵՐԹ | Ճ- | |
| ԹԵՐԹԵՐ | 35 | |

HAYRAPETYAN PROJECTS
"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ
www.haypro.am




ԿՏՐՎԱԾՔ 1-1 Մ 1:200

| | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | |
| ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | |
| ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ | |
| ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ | ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | |
| 2022 | | |
| ՄԱՍՇՏԱԲ | | |
| ՓՈՒԼ | ԱՆ | |
| ԹԵՐԹ | Ճ- | |
| ԹԵՐԹԵՐ | 35 | |

HAYRAPETYAN PROJECTS
"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ
www.haypro.am

# ԱՂՅՈՒՍԱԿ

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՔԱՇԻ ԵՎ ՃՈՊԱՆԱՍԱՐՔԵՐԻ

| ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՄԱԿՆԻՇ ՏԵՍԱԿ | ԸՆԴՀԱՆ. ՔԱՇԸ ՏՈՆՆԱ | ՃՈՊԱՆԱՍԱՐՔԻ ՀԱՄԱՐԸ | | ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԱՓ. ԷԼԵՄԵՆՏ. ՔԱՆԱԿԸ | | ԲԵՌՆԱԿԻՐ ՃՈՊԱՆԱՍԱՐՔԵՐ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՏԵՂԱՓ. ԺԱՄ. | ՄՈՆՏԱԺԻ ԺԱՄԱՆԱԿ | ՏԵՂԱՓ. ԺԱՄԱՆԱԿ | ՄՈՆՏԱԺԻ ԺԱՄԱՆԱԿ | ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ | ՄՈՆՏԱԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ |
| Կղապարամած | – | 0,75 | 1 | 2 | 3 | 1 | I + 2IV | I + 2VI |
| Ամրանային ձողեր | – | 1,00 | 3 | 3 | ՏՈՒՓ | ՏՈՒՓ | I + 2III | I + 2III |
| Ամրանային հարթ ցանցեր | | 1,00 | 4 | 4 | ՄԻՆՉԵՎ 5 | ՄԻՆՉԵՎ 5 | I + 4III | I + 4III |
| Ֆաներա | | 0,80 | 5 | 5 | ՏՈՒՓ | ՏՈՒՓ | I + 2IV | I + 2IV |
| Ամրանային ցանցե փաթույթով | | 1,00 | 6 | 7 | 5 | 1 | I + 2II | I + 2III |
| Ամրանային տարածական ցանցեր | – | 1,00 | 8 | 8 | 1 | 1 | I + 2III | I + 2III |
| Աղույս տակդիրով | – | 1,80 | 9 | – | 2 ՏԱԿԴԻՐ | – | I + 2III | – |
| Քարեր ուղղանկյուն տուփով | – | 1,90 | – | 10 | – | 2 ՏԱԿԴԻՐ | – | I + V |
| Կիսաեթիլենային նյութեր | – | 1,50 | 11 | 11 | ՏՈՒՓ | ՏՈՒՓ | I + 2II | I + 2II |
| Մետաղական հեծաններ | – | 0,80 | 12 | 13 | 5 | 1 | I + 2IV | I + 2III |
| Փաթեթային նյութերի տարրա | 4780M | 1,00 | 14 | 14 | 1 | 1 | I | I |
| Շաղախի մետաղական բեռնարկղ 0,28 խմ տարողությամբ | 3182E | 0,60 | 15 | 16 | 2 | 1 | I | I |
| Բետոնե շաղախի մետաղական զտեղարան 1,0 խմ տարողությամբ | ГОСТ 21807–76 | 2,90 | 17 | 17 | 1 | 1 | I | I |
| Եռակցողի և մոնտաժնիկի կրպակ | – | 2,50 | 18 | 18 | 1 | 1 | I | I |
| Գազե բալոնների տեղափոխման եվ պահպանման բեռնարկղ | 2369A | 0,75 | 19 | 19 | 1 | 1 | VII | VII |
| Գործիքների պահպանման տուփ | 1164AБ | 0,63 | 20 | 20 | 1 | 1 | I | I |
| Լուսարձակային աշտարակ | 1131A | 0,25 | 21 | 21 | 1 | 1 | I | I |
| Մոնտաժնիկի շարժուն հարթակ | 3755 | 0,08 | 22 | 22 | 1 | 1 | I | I |
| Բեռնատար վերելակի խցիկ | – | 1,20 | 23 | – | 1 | – | I | – |
| Մարդատար վերելակի խցիկ | – | 0,80 | 24 | – | 1 | – | VII | – |
| Կառավարման կայան | – | 0,25 | 25 | – | 1 | – | I | – |
| Կարապիկ | – | 1,58 | 26 | – | 1 | – | I | – |
| Հակակշիռ | – | 0.10 | 27 | – | 1 | – | I + 2III | – |
| Ուղղաձողեր | – | 1,20 | 28 | – | ՏՈՒՓ | – | I + 2IV | – |
| Վերելակի հորի դռներ | – | 1,80 | 29 | – | 1 | – | I + VIII | – |
| Հյուսուն նյութերի տարրա [3] | 3201 | 4,22 | 30 | 31 | 1 | 1 | I | I |
| Տաղավար | – | 4.0 | 32 | 32 | 1 | 1 | I | I |

### Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ճոպանասարքերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղափոխվող բեռի ծավալը և ամրակցվող էլեմենտների քաշը:
2. Ճոպանակեռերը պետք է ունենան արտադրող գործարանի դրոշմները կամ ամրակցված նշում հաշվառված համարով, բեռի կրողունակության նշումով և փորձարկման ամսաթվով:
3.Սուր անկյուններ ունեցող բեռները տեղափոխելիս անհրաժեշտ է էլեմենտների կողերի և ճոպանասարքի միջև տեղադրել միջադիրներ ապահովելով ճոպանը քայքայումից:
4.Բեռները որոնցում չեն նախատեսված ամրակցման օղակներ տեղափոխվում են կռունկի աշխատանքի համար անվտանգության պատասխանատու անձի ներկայությամբ և ղեկավարմամբ:
5.Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը անհրաժեշտ է տվյալ սխեմայի հետ ծանոթացնել կռունկավարին և ամրակցող աշխատակիցներին ստորագրությամբ:

## ՏԱՐՐԱՆԵՐԻ ԵՎ ՃՈՊԱՆԱՍԱՐՔԵՐԻ ՑԱՆԿ

| ՏԵՍԱԿ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ГОСТ | | ՔԱՇԸ ԿԳ |
|---|---|---|---|---|
| I | Ճոպանասարք 4 - ճյուղանի 4 СК1-3,2-6,0 Q=3,2 S. L=6,0մ | ГОСТ 25573–82 | – | 76,0 |
| II | Ճոպանասարք 1 - ճյուղանի 4 СК1-3,2-6,0 Q=3,2 S. L=6,0մ | ГОСТ 25573–82 | – | 15,2 |
| III | Ճոպանասարք 1 - ճյուղանի 4 СК1-3,2-2,0 Q=3,2 S. L=2,0մ | ГОСТ 25573–82 | – | 15,2 |
| IV | Ճոպանասարք 1 - ճյուղանի 4 СК1-3,2-4,0 Q=3,2 S. L=4,0մ | ГОСТ 25573–82 | – | 7,5 |
| V | Լայնակի տուփ աղյուսի 2 տակդիրի համար | Р–408Б | – | 82,0 |
| VI | Կաղապարամածի տեղափոխման բռնիչներ | – | – | 12,0 |
| VII | Ճոպանասարք 1 - ճյուղանի 1 СК1-1,0-1,5 Q=1,0 S. L=1,5մ | ГОСТ 25573–82 | – | 9,0 |
| VIII | Ատաղձագործական պատրաստվածքների զտեղնարան | 6228M | – | 50,0 |

### ՃՈՊԱՆՍԱՐՔԵՐԻ ԱՄՐԱԿՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բեռը ամրակցել կարելի է միայն համաձայն ամրակցման սխեմայի, անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել ծգալար:
2. Կեռը պետք է ազատորեն մտնի բոլոր օղակները:
3. Բեռը ամրակցում են բոլոր օղակներով նախատեսված բեռի տեղափոխման համար:
4. Ճոպանասարքի բոլոր ճյուղերը պետք է ունենան միևնույն ձգվածությունը և նրանց միջև անկյունը չպետք է գերազանցի 90՛ սատիճանը:
5. Բազմաճյուղանի ճոպանի չօգտագործված ծայրերը պետք է ամրացնել այնպես, որ բեռի տեղաշարժի ժամանակ իրենց ճանապարհին չկնասեն հանդիպածին:
6. Ամրակցման ժամանակ ճոպանասարքերը պետք է ուղղված լինեն բեռի կենտրոնից:

### Ա Ր Գ Ե Լ Վ Ո Ւ Մ Է

1. Կեռը ամրակցել մոնտաժային օղակներից:
2. Ուղղել ճոպանասարքը կեռին հարվածելով:

| ԹԵՐԹԵՐ | ԹԵՐԹ | ՓՈՒԼ | ՄԱՍՇՏԱԲ | 2022 | | ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | Ճ- | ԱՆ | | | | | ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆՔ. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | ՃՈՊԱՆԱՍԱՐՔԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ ԸՍՏ ԲԵՌՆԵՐԻ | |
| | | | | | | | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| | | | | | | | ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |

"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ
HAYRAPETYAN PROJECTS
www.haypro.am




| | | | |
|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | ՃՈՊԱՆԱՍԱՐՔԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ ԸՍՏ ԲԵՌՆԵՐԻ | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |

| | |
|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ | ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ |
| | 2022 |
| ՄԱՍՇՏԱԲ | |
| ՓՈՒԼ | ԱՆ |
| ԹԵՐԹ | Ճ- |
| ԹԵՐԹԵՐ | 35 |

HAYRAPETYAN PROJECTS

"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ

www.haypro.am







| | | | |
|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | | |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ

ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2022

| | |
|---|---|
| ՄԱՍՇՏԱԲ | |
| ՓՈՒԼ | ԱՆ |
| ԹԵՐԹ | Ճ- |
| ԹԵՐԹԵՐ | 35 |

HAYRAPETYAN PROJECTS

"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ

www.haypro.am

## ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՍԽԵՄԱՆ




## ՍԽԵՄԱՅՈՒՄ ԹՎԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ

1.Ցեմանտ ավազային շաղախով անկղ
2.Քարերով բարձակ
3.Կամրջակներ
4.Տրանսպորտային գոտի
K-1 - 5-րդ կարգի քարշար վարպետ;
K-2 - 3-րդ կարգի քարշար վարպետ;
K-3 - 2-րդ կարգի քարշար վարպետ;

## ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

| ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՔԱՐԵ ՇԱՐՈՎ | | | | |
|---|---|---|---|---|
| ՍՏՈՒԳՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՀԱՆՋՆԵՐ, ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՇԵՂՈՒՄՆԵՐ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | ՍՏՈՒԳՈՂԸ ՈՎ - ԵՐԲ | ՍՏՈՒԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊ. |
| ԱՄՐԱՆՆԵՐԻ, ՔԱՐԻ, ՇԱՂԱԽԻ, ՆԵՐԴԻՐ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՈՐԱԿԸ | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ГОСТ | ԱՐՏԱՔԻՆ ԶՆՆՈՒՄ ՉԱՓՈՒՄ, ԱՆՁՆԱԳ. ՍՏՈՒԳՈՒՄ | ԱՇԴԵԿԸ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿԻ ՊԱՏԻ ՇԱՐԸ | ՊԱՀԱՆՋԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ |
| ՊԱՏԵՐԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ | 10 մմ | ՄԵՏՐ | ՆՈՒՅՆԸ | |
| ՄԵՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՉԱՓՍԵՐԸ | 15 մմ | ՄԵՏՐ | ՎԱՐՊԵՏԸ ՀԱՐԿԻ ՇԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ | |
| ՇԱՐԻ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՉԱՓՍԵՐԸ - ՊԱՏԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ | +15 մմ / -15 մմ | ՄԵՏՐ, ՔԱՆՈՆ | ՎԱՐՊԵՏԸ ՇԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ | |
| ՇԱՐԻ ԿԱՐԵՐԻ ՈՐԱԿԸ (ՉԱՓՍԵՐԸ, ԼԻՑՔԻ ՈՐԱԿԸ) | ՀՈՐ. 12(+3,-2) մմ; ՈՒՂՂ.10(+2,-2) մմ | ՄԵՏՐ, ՔԱՆՈՆ 2Մ | ՆՈՒՅՆԸ | |
| ՇԱՐԻ ՈՒՂՂԱՀԱՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ | 10 ՄՄ ՀԱՐԿԻՆ | ՈՒՂՂԱԼԱՐ, ՀԱՐԹԱՉԱՓ | ՆՈՒՅՆԸ | |
| ՇԱՐԻ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. | 15 մմ 10 Մ ԵՐԿԱՐՈՒԹ. | ՀԱՐԹԱՉԱՓ, ՆԻՎԵԼԻՐ | ՆՈՒՅՆԸ | |
| ԲԱՑՎԱԾՔԻ ՎԵՐԵՎԻ. ԵՎ ՆԵՐՔԵՎԻ ՆԻՇԵՐԸ | 10 մմ | ՄԵՏՐ, ՀԱՐԹԱՉԱՓ, ՔԱՆՈՆ, ՆԻՎԵԼԻՐ | ՎԱՐՊԵՏԸ ՄԻՆՉԵՎ ՔԱՐԻ ՇԱՐԸ | |
| ՇԱՐԻ ՃԻՇՏ ԱՄՐԱՆԱՎՈՐՈՒՄԸ | +10 մմ / -10 մմ | ԱՐՏԱՔԻՆ ԶՆՆՈՒՄ ՉԱՓՈՒՄ, ՄԵՏՐ | ՎԱՐՊԵՏԸ ՇԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ | |
| ԲԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՆՈՒՄԸ ՊԱՏԻՆ | ՆՎԱԶԱԳ. 250 մմ | ՄԵՏՐ | ՆՈՒՅՆԸ | |
| ԾԱԾԿԻ ՍԱԼԵՐԻ ՀԵՆՈՒՄԸ | +20 մմ / -20 մմ | ՄԵՏՐ | ՎԱՐՊԵՏԸ ՄՈՆՏԱԺԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿԻՉԸ |

## ՔԱՐՇԱՐ ՕՂԱԿԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ




## ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

| ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ԾԱԾԿԻ ՍԱԼ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| № п/п | ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ | ՊԱՀԱՆՋՆԵՐ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ՍՏՈՒԳՈՂԸ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ |
| 1 | ԲԵՏՈՆԱՅԻՆ ՇԱՂԱԽԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԲԵՏՈՆԱՅԻՆ ԿԱՐԵՐԻ ԱՄՐՈՒԹՅԱՆ | ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ М 400 | ՏԵՍՈՂԱԿԱՆ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ |
| 2 | ԱՄՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ | ՀԵՆՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԳԾԻՆ | ՏԵՍՈՂԱԿԱՆ, ԳՈՐԾԻՔՈՎ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ——— |
| 3 | ՍԱԼԵՐԻ ԱՄՐԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄ | ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ | ՏԵՍՈՂԱԿԱՆ | ԱՇԴԵԿ | ——— |
| 4 | ԵՐԿՈՒ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԻ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՆԻՇԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ | 10 ՄՄ | ՆԻՎԵԼԻՐ, ԹԵՈԴՈԼԻՏ | ԱՇԴԵԿԸ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |
| 5 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ | ՏԵՍՈՂԱԿԱՆ | ԱՇԴԵԿ | ——— |

| | | | |
|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ԶՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇԱՆԳՆԵՐ | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | | Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ — ՇԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՄԱՍՇՏԱԲ — 2022
ՓՈՒԼ — ԱՆ
ԹԵՐԹ — Ճ-
ԹԵՐԹԵՐ — 35

HAYRAPETYAN PROJECTS
"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ
www.haypro.am

## ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՍՏԱՌ

| № п/п | ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ | ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՆԿԱՊՔԸ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ՍՏՈՒԳՈՂԸ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՆԻՇԱՅԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՑՔԻՑ | 10% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 100մ (20մմ) | ՆԻՎԵԼԻՐ, ԹԵՈԴՈԼԻՏ | ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |
| 2 | ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՅԻՆ ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ | 10% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 15-20սմ ՄՆԱՑԻԱԼԸ 10սմ | ԺԱՊԱՎԵՆԱՅԻՆ ՄԵՏՐ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |
| 3 | ՇԵՐՏԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ | 10% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 15-20մմ ՄՆԱՑԻԱԼԸ 10մմ | ԳՈՐԾԻՔ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ |
| 4 | ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԹԵՔՈՒՄՆԵՐԸ | 10% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 15-20մմ ՄՆԱՑԻԱԼԸ 10մմ | ՀԱՐԹԱՉԱՓ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |
| 5 | ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ | 5% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 10-6մմ ՄՆԱՑԻԱԼԸ 5-3մմ | 3,0 մ. ԵՐԿԱՐ. ՔԱՆՈՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |

## ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՋՐԱԳԾԵՐ, ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐ

| № п/п | ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ | ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՆԿԱՊՔԸ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ՍՏՈՒԳՈՂԸ | ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՀՈՐԱՆՆԵՐԻ ՆԻՇԱՅԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ | ՄԻՆՉԵՎ 5% ՇԵՂՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ | ՆԻՎԵԼԻՐ, ԹԵՈԴՈԼԻՏ | ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ |
| 2 | ՋՐԱԳԾԵՐԻ ԵՎ ԿՈՅՈՒՂԱՏԱՐԵՐԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԿԱՐԱՆՆԵՐ | ——— | ՕԴԻ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՈՎ, ԱՐՏԱՔԻՆ ԶՆՆՈՒՄ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿԻՉ |
| 3 | ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՎԱԶԱՅԻՆ ԲԱՐՁԻԿԻ ՇԵՐՏԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ | 10% ԴԵՊՔԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ ՇԵՂՎԵԼ 15-20մմ ՄՆԱՑԻԱԼԸ 10մմ | ՔԱՆՈՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿԻՉ |
| 4 | ԹԵՔՈՒՄՆԵՐԸ | ՄԻՆՉԵՎ 5% ՇԵՂՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆԻՑ | ՆԻՎԵԼԻՐ, ԹԵՈԴՈԼԻՏ, ՀԱՐԹԱՉԱՓ, ԱՆԿՅՈՒՆԱՉԱՓ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ԳԵՈԴԵԶԻՍՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿԻՉ |
| 5 | ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ՀՈՐԱՆԻՑ ՄՅՈՒՍԸ | ՄԻՆՉԵՎ 0,5% ՇԵՂՈՒՄ | ՋԱՅՆԱՅԻՆ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՄԻՋՈՑՈՎ | ՎԱՐՊԵՏ, ԱՇԴԵԿ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿԻՉ |

| | | | |
|---|---|---|---|
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔ | ՆԳԾ | Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| ՀԱՍՑԵ | ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ՆՈՐ ՀԱՃՆ Ք. Ս. ՋՈՒԼՖՅԱՆ 2-րդ ԹԱՂԱՄԱՍ 1-ին ՓՈՂՈՑ 14 | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ | |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ԱՐՄՎԱՀՇԻՆ» ՍՊԸ | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | | |

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍ
ՇԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2022

ՄԱՍՇՏԱԲ

| ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
|---|---|---|
| ԱՆ | Ճ- | 35 |

HAYRAPETYAN PROJECTS 15
"ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ" ՍՊԸ
www.haypro.am

## Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 65 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

## Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՄԱԿՆԻՇԸ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|---|
| 1 | Բուլդոզեր | Б10М.0111-1Е | հատ | 2 |
| 2 | Թրթուրավոր էքսկավատոր 1.85մ³ շերեփի տարողությունը | Hyundai R 200 LC | հատ | 2 |
| 3 | Թրթուրավոր էքսկավատոր փխրեցնող | Hyundai R 380 C 9 SH | հատ | 2 |
| 4 | Աշտարակային կռունկ<br>-սլաքի երկարությունը - 20.0-30.0 մ<br>-կեռիկի բարձրությունը- 58.40-74.0 մ<br>-բեռնունակությունը - 6-10տ | КБМ 401П | հատ | 2 |
| 5 | Ավտոկռունկ<br>-սլաքի երկարությունը - 30.0մ<br>-կեռիկի բարձրությունը - 9.5-22.75մ<br>-բեռնաբարձությունը մինչև - 16.0 տ | КС-35714-10 | հատ | 2 |
| 6 | Ավտովերհան -28 | | հատ | 2 |
| 7 | Տեղում բետոն պատրաստելու սարք | | հատ | 2 |
| 8 | Ավտոբետոնախառնիչ | АБС | հատ | 2 |
| 9 | Բետոնամուղ պոմպ | Volvo FM12 | հատ | 2 |
| 10 | Կողավոր ավտոմեքենա | | հատ | 2 |
| 11 | Ավտոինքնաթափ 25տ | КМАЗ | հատ | 4 |
| 12 | Թրթռան մակերեսային | ԻՎ-117 | հատ | 4 |
| 13 | Թրթռան խորքային | U-414 | հատ | 4 |
| 14 | Թրթռան | ԻՎ-113 | հատ | 4 |
| 15 | Եռակցման ապարատ | US-2 | հատ | 4 |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

## Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

**Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է օրեկան մեկ մարդու հաշվարկով 0.3 կգ x65x720/1000= 14,04 տ և շինարարական աղբն է 600 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.}$ = **(n x N + $n_1$ x $N_1$) x T,** որտեղ

**n –** ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

**N–** ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$օր/մարդ

**$n_1$–** սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 60 մարդ

**$N_1$** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝0.025 խմ.օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր

$W_{խ.տ.}$= (5 x 0.016 + 60 x 0.025) x 720 = 1137.6 խմ/շին. ժամ.:

b) **Շինհրապարակ մտնող և դուրս եկող տեխնիկայի և մեքենաների անիվների լվացման համար պահանջվող ջրածախսի հաշվարկը**

**N- միջին օրեկան մտնող դուրս եկող մեքենաների քանակ, 6 մեքենա**

**K-մեկ մեքենայի անիվները լվանալու նորմը, 0,12խմ**

**T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր**

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի =N*K*T=6*0.12*720= 518.4 խմ/շին. ժամ:**

C) **Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$Մ_1$ = $S_1$ x $K_1$ x T,** որտեղ՝

**$S_1$** – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

**$K_1$** – 1 $մ^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 720

**$Մ_1$** = 1000 x 0.0015 x 720 = 1080 խմ/շին. ժամ.:

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3355.2 խմ/շին. ժամ:**

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Հաճն Ջուր>> ՀՈԱԿ ցանցին, լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել համայնքային ջրատարից տրամագիծը հասցնելով d=150մմ, ջրահեռացումը միանալով համայնքի վերջնամասում գտնվող d=500մմ դիտահորին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Հաճն քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի նախատեսվող ենթակայանից

Գազամատակարարումը նախատեսվող ծախսով համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի նախատեսվող գազատարից :

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

## ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճն Ս. Զուլֆյան 2-րդ թաղամաս 1-ին փողոց 14 հասցեի տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավային մասում, Հրազդան գետի կիրճի՝ աջ բարձրադիր ափին հարթության վրա: Տեղազննվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1337.5-1341.5 մետրերի սահմաններում:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Նոր Հաճընը Հիմնադրվել է 1953 թվականի փետրվարի 26-ին որպես Արզնի ՀԷԿ-ին կից բանվորական ավան: Գտնվում է Կոտայքի մարզում, Արզնի կիրճի և Արզնի-Շամիրամ ջրանցքի հարևանությամբ: Այն ունի մոտավորապես 13.000 բնակիչ: Նոր Հաճըն արդյունաբերական կենտրոն է ադամանդագործության բնագավառում: Քաղաքն ունի արվեստի և հանրակրթական դպրոցներ, քաղաքային գրադարան, մարզադպրոց, մշակույթի պալատ, Կիլիկիայի պատմության թանգարան:

Երկրաբանական կառուցվածքում հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ: Տեղազննվող հարթակը ներկայացնում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները, որոնց ծածկում են էլյուվիալ-դելյուվիալ նստվածքները կավային գրունտների տեսքով և տեխնածին առաջացումները:

Նոր-Հաճըն համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե |
| --- | --- | --- |
| Հուշարձան նվիրված Հաճնի 1920 թ. ինքնապաշտպանությանը | 1974 թ. | քաղաքի կենտրոնում |

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: ՈՒսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից:

Նախկինում տվյալ տեղամասում մինչև 50 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 50 մետրից խորը հորիզոններում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:

Մոտեցումներն ապահովված են համայնքային նշանակության ճանապարհներից: Կից գտնվում են հասարակական շենքերով ծանրաբեռնված և կառուցապատումից ազատ հողամասեր:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

## ԿԼԻՄԱՆ

ՌԻսումնասիրվող տարածքը գտնվում է «ՏԱՔ» կլիմայական շրջանում: Ամառը՝ հուլիսի օգոստոսի միջին ամսական ջերմաստիճանը 22,8˚C է: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 61% : Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -4,9˚C է: Ստորև աղյուսակի տեսքով տրված է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» (http://www.arlis.am/documentView.aspx?docid=188846 ) նորմատիվային փաստաթղթում առկա «Եղվարդ» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի (քամի) ամսական և տարեկան տվյալները՝ աղյուսակային տեսքով:

| Օդի միջին ջերմաստիճանը °C | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անվանումը | Օդի միջին ջերմաստիճանն ըստ ամիսների °C | | | | | | | | | | | Միջին տարեկան°C | Բացարձակ նվազագույն°C | Բացարձակ առավելագույն°C |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| Եղվարդ | -4,9 | -2,8 | 2,7 | 9,4 | 14,4 | 18,9 | 22,8 | 22,8 | 18,6 | 11,8 | 4,8 | -1,7 | 9,7 | -32,6 | 38,7 |

| Օդի հարաբերական խոնավություն % | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավություն ըստ ամիսների % | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենա-ցուրտ ամսվա | | Ամենա-տաք ամսվա | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսեկան | Միջին ամսեկան ժամը 15-ին | Միջին ամսեկան | Միջին ամսեկան ժամը 15-ին |
| Եղվարդ | 75 | 71 | 65 | 61 | 60 | 53 | 49 | 47 | 49 | 59 | 70 | 76 | 61 | 75 | 66 | 49 | 34 |

| Մթնոլորտային տեղումներ ՄՄ | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակ ըստ ամիսների *<u>միջին ամսական մմ</u>* . *օրական առավելագույն մմ* | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը Նոյեմբեր-Մարտ ամիսներին մմ | Տեղումների քանակը Ապրիլ-Հոկտեմբեր ամիսներին մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Տարեկան | | |
| Եղվարդ | 35<br>30 | 36<br>31 | 44<br>42 | 60<br>40 | 64<br>42 | 39<br>29 | 26<br>53 | 13<br>45 | 17<br>35 | 40<br>39 | 35<br>37 | 36<br>28 | 445<br>53 | 186 | 259 |

## Օդային ավազան

Նոր Հաճըն համայնքի մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում ավտոմայրուղու տրանսպորտային միջոցների արտանետումները:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է "Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն" ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Նոր Հաճըն համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար "Էկոմոնիթորինգ"-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց[1]: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50000 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Նոր-Հաճըն համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.3 մգ/մ$^3$;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.05 մգ/մ$^3$;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ$^3$;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ$^3$:

**Ջրային ռեսուրսներ**

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս)։ Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով։

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով։

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները ամփոփ տեղեկանքից բերված են ստորև։

*Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք*

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և ալյումինով։ Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով։ Արզել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Արզել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով։

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված։

**Հողերի նկարագիրը**

*Հողերը*

Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային վայրերը:

Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 13000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր Հանվող 11000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Հաճնի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Կենսաբազմազանություն

**Բուսական աշխարհ**: Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, նապաստակ և այլն:

Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տափաստանային գոտում համեմատաբար շատ են կրծողները և թռչունները, քիչ են սողուններն ու երկկենցաղները: Լայն տարածում ունեն ճագարամուկը, գետնասկյուռը, դաշտամուկը, խլուրդը, իսկ գիշատիչներից հանդիպում է ժանտաքիսը: Թռչուններից նշանավոր են միջատակեր սարյակները, սևճակատ շամփրուկը, որոնք սնվելով մշակաբույսերին վնասող միջատներովէ մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը:

Նախատեսվող գործունեության տարածքում բույսեր կամ կենդանիներ, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում բացակայում են:

**ՀՀ Կոտայքի մարզի հուշարձանների ցանկը համաձայն ՀՀ կառավարության 967-Ն որոշման՝**

**Երկրաբանական հուշարձաններ՝**

| | | |
|---|---|---|
| 1. | «Անանուն» խզվածքներ | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ |
| 2. | Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ | Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ |
| 3. | «Թագավորանիստ» խարամային կոն | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում |
| 4. | «Պեռլիտե փիղ» քարե քանդակ | Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ |
| 5. | «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան |

| | | |
|---|---|---|
| | վերին կավճի կրաքարերի կոնտակտ | ծայրամասում |
| 6. | «Ծակ քար» բնական թունել | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին |
| 7. | «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 8. | «Անանուն» քարայր սյունաձև բազալտներում | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 9. | «Անանուն» լանջային էրոզիա | Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին |
| 10. | «Անանուն» լավային ծալքեր | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 11. | «Անանուն» խորշեր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ |
| 12. | «Հատիս» հրաբուխ | Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ |
| 33. | «Ավազան» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 1.5 կմ հս-արլ |
| 14. | «Գյումուշ» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս (Գյումուշ) գյուղից 0.5 կմ հս-արլ |
| 15. | «Անանուն» ապարների բնորոշ մերկացում | Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Գյումուշ ՀԷԿ-ի միջև |
| 16. | «Անանուն» օբսիդիանի ելքեր | Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում |
| 17. | «Անանուն» քարե կուտակումներ | Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում |
| 18. | «Գութանասար» հրաբուխ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ |
| 19. | «Լեռնահովիտ» քարային կուտակումներ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ |
| 20. | «Ջրաղբյուրի» (Մանգյուսի) բրածո ֆլորա | Կոտայքի մարզ, գյուղ Ջրաղբյուր |

<u>Ջրաերկրաբանական հուշարձաններ</u>

| | | |
|---|---|---|
| 1. | «Հաղպրտանք» աղբյուր | Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա |
| 2. | «Համով» աղբյուր | Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| 3. | «Քաղցր» աղբյուր | Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա |
| 4. | «Չորի» աղբյուր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա |
| 5. | «Աուզի» աղբյուր | Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |

Ջրագրական հուշարձաններ՝

| | | |
|---|---|---|
| 1. | «Ղազ» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս |
| 2. | «Վիշապա» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ |
| 3. | «Բիշար» լիճ | Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 3 կմ հս |
| 4. | «Ջեյնալ» լիճ | Կոտայքի մարզ, Սարաբերդ (Սևաբերդ) գյուղից մոտ 7 կմ հս-արլ |

Բնապատմական հուշարձաններ

| | | |
|---|---|---|
| 1. | «Ողջաբերդ» բնապատմական համալիր | Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում |

Կենսաբանական հուշարձաններ

| | | |
|---|---|---|
| 1. | «Ռելիկտային կրկես Քյորօղլի լեռան մոտ» | Կոտայքի մարզ, Արտավազդ գյուղի մոտ |
| 2. | «Ալպյան գորգ» | Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, 300 մ բարձրության վրա) |
| 3. | «Թանթրվենի, Տիգրանի» | Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա |

**Թափոնների կառավարում**

Նոր Հաճընի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը / ծածակագիրը՝ 9120040001004/՝ 14.02 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 600 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 11000 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածակագիրը՝ 5410020702033/

կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը ունի թեքություն հարթակի որոշակի հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

## ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

## ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետնյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերնութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

## ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկակակն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Ջրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2562.3 քմ:
- Կանաչապատման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Հաճրնի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 1460 օր, նշված հարցը կիստակեցվի մոտ 3 տարի հետո:
- կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության

կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման

մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;

- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահութան նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

## ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի և առաջացող թրթռումների գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում: Նախատեսվող տեխնիկական միջոցների անձնագրային տվյալներով աղմուկի մակարդակը աշխատատեղերում կկազմի 80դԲա հաշվի առնելով հեռավորությունը մոտակա շենքերց աղմուկի մարումը կկազմի առնվազն 40 տոկոս և մոտակա շենքերի մոտ չի գերազանցի 48դԲա այն դեպքում երբ թույլատրելի ցուցանիշը 55դԲԱ է:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետնյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի ( փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով:
7. Հարակից տարածքներում կիրականացվի կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ հաճախականությամբ: Կենսաբազմազանության պահպանմանն համար աշխատակիցները կանցնեն ուսուցում՝ գործունեության ընթացքում տեսակների հայտնաբերման դեպքում դրանց այլ՝ ապահով վայր տեղափոխելու նպատակով համաձայն ՀՀ ԲԱՕՊ և ԲՊՎՆ դրանց օգտագործման կարգ սահմանելու 14.08.2014թ N 781-Ն որոշման

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1660000 դրամ:

| Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ | | |
|---|---|---|
| Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով | 300000 | 300000 |
| Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ; | 24x45000 | 1080000 |
| Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: | 8x35000 | 280000 |
| Ամբողջ շինարարության համար | | 1660000 |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ<br>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել<br>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:<br>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| Շինարարական աշխատանքներ | Օդի որակ | (a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար<br>Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով<br>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով<br>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:<br>(d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով |
| | Աղմուկ | (a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսահմանափակվի թույլատրված ժամերի միջակայքում<br>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: |

| | | |
|---|---|---|
| | Թափոնների կառավարում | (a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն |
| Կեղտաջրերի հեռացում | Ջրի որակ | (a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:,<br>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:<br>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ ճնշումայնի ջրով (կարչեր) լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: |
| Հետիոտների և երթևեկության ապահովություն | Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ | (a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.<br>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ<br>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:<br>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:<br>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. |

| | | |
|---|---|---|
| | | ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում: |
| Արտակարգ իրավիճակների կառավարում | Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում | - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;<br>- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը;<br>- Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:<br>- Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:<br>- Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ<br>- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար: |

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում<br>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից | Շինհրապարակ | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում | | | | |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | Կապալառու |
| Իներտ շինանյութերի գնում | - Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից | Իներտ նյութերի պահեստ | Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում | Մատակարարմա ն ընթացքում | Կապալառու, մատակարա ր |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում<br>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ | Արտաքին զննում | Շինարարության ողջ ընթացքում | Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողո ւթյուն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու, պատվիրատ ու |
| Կանաչապատում | Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում | Սեփական տարածք | Արտաքին զննում | մշտական | Կապալառու |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ